Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

1532

17 1356

Ա-55

100/137-OC.
100/137-OC.
ф

# ՕՐԷՆՔ

ՎԱՅԵԼՈՒՉ

## ԿԵՆՑԱՂԱՎԱՐՈՒԹԵԱՆ

Փարիզ, — Տպագր. Ար. ի Տպար. Վալտերի ի Փող. Պոնաբարթ 44.
Paris. — Typographie Arménienne de Walder, rue Bonaparte, 44.

198

17
Ա 53

# ՕՐԷՆՔ

## ՎԱՅԵԼՈՒՉ

# ԿԵՆՑԱՂԱՎԱՐՈՒԹԵԱՆ

Ի ՊԷՏՍ ՈՒՍՈՒՄՆԱՍԷՐ ՄԱՆԿՏՒՈՅՆ

ՓԱՐԻԶ

Ի ԳՐԱՆՈՑԻ Ճ. ԱՐԱՄԵԱՆ

—

1856

2001

9138

# ՕՐԷՆՔ

ՎԱՅԵԼՈՒՉ

# ԿԵՆՑԱՂԱՎԱՐՈՒԹԵԱՆ

## ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԻՒՆ

Ի՞ւ խըտրի մարդ յանբանից՝ թէ ոչ բանիւն եւ կրօնիւ.
Ի՞ւ այր քան զայր գերազանց՝ բայց ըզգածմամբք իւր ազնիւ.
Ազնըւագոյն արդարեւ աստուածապաշտն է իմաստ,
Որով միայն է յաստիս զոյ եւ յանտիս բարեբաստ:

Բաւ քեզ զայլոց ըզհաւատս ի ծաղր առնուլ վայրապար,
Կամ ըզկրօնից սրբութիւնս յիշել ի խօսս անդաղար:
Ոչ ամենայն որ զօրէ զկրօնից վիճել քաջաբար,
Այլ այր հըմուտ, պերճախօս, անշահասէր եւ խոնարհ:

Մի զԱստուծոյ սուրբ անուն ստէպ ընդ բերան ածիցես,
Բայց եւ լինել բարեպաշտ երբէք դու մի ամաչես:

## ԱՂՕԹՔ ՑԵԿԵՂԵՑԻՈՋ

Թէ ջերմ իցես աղօթկեր եւ եթէ զաղջ կամ թէ ցուրտ,
Սակայն ի քէն միշտ պատիւ խըրդրէ կրօնիցըն խորհուրդ:

Ցեկեղեցւոջ ւ՚ի մատրան լեր ցանգ ըզգօն եւ լուռ կաց,
Եւ թէ խօսել լիցի հարկ, ցածուն ձայնիւ բարբառեաց.

Ի գնալ քո անդ մի՛ բերեւ , այլ ծանր իցես, դիմօք յուրջ ,
Եւ թէ խորհուրդքըն պաշտօնին՝ զկայ առ եւ մի՛ հայիր շուրջ :

Աստուածային պաշտամունք մինչ հանդիսիւ կատարին
Դու մի՛ եղցես տաճարին եւ կամ զարդուցն ի գլխին :

Հանդերձ մաքուր լիցի՛ քեզ , բայց եւ պարկեշտ անպաճոյճ,
Եւ ուր կացերն ի սկզբան՝ ի նոյն մնասջիր ի տեղւոջ :

Մի՛ զոք երբեք մըղիցես յորժամ մերձիս ի սեղան
Ի հաղորդել խորհրդոց կամ նըշխարաց պաշտաման .
Այլ քում կարգին ըսպասեա եւ յառաջեա զգօնաբար ,
Ըզնոյն պահեա դու կանոն յելս եւ ի մուտս ի տաճար :

## ԾՆՈՂՔ, ՈՐԴԻՔ ԵՒ ԱԶԳԱԿԻՑՔ

Ասպարիսին յաւուրեանց գըլուխ է տունն հայրենի ,
Եւ որդւոց սէր առ ծընողս պարտք են նախկին յետ կրօնի .
Միշտ ակն ածջիր ծընողաց , արգահատեա ի նոսին ,
Զիղձսըն սիրով կատարեա , եւ հարց խորհուրդ ջերմագին :
Թէ յանկարծ բիւր ինչ ասեն՝ մի՛ կշտամբեր ըզնոսա ,
Որչափ գիտուն եւ իցես՝ երախտապարտ ես նոցա :

Ի գլուխ տարւոյ , յոր տօնի եւ ի ծնընդեան տարեդարձ
Մաղթանս առնել եւ ընծայս է վայելուչ ձօնել հարց .
Թէ ի ծնողաց ի բացեալ յերկիր օտար պանդխտիս ,
Ըստէպ ըստէպ գըրեա գիր , հատո զսիրոյն քո պարտիս :

Շատ կամ սակաւ մեծարանս եւ սէր ի քեն ակն ունին
Արեանառուք ըստ կարգի մինչ յազգակիցսըդ վերջին :

Բանի՛ այպանք են ումեք թէ արտաքոյ բարեկիրթ ,
Եւ յիւրսն իցէ տըխրադէմ եւ վարիցի բանիւք բիրտ .
Ի քո տանեդ արա սկիզբըն շնորհալի գընացից ,
Եւ արտաքին կենցաղոյդ տուն քո լիցի վայր մարզից :

Սէր եւ զորով առ որդիս պարտ եւ օրէն է ծնողաց ,
Բայց ոչ անդուլ ըզնոցուն խօսել հանդէպ օտարաց .
Եւ թէ մանուկ սըխալէ կամ պատժապարտ գըտանի ,
Ոչ միշտ օգուտ է խրատել ըզնա այլոց առաջի :

## ՏԷՐ ԵՒ ԾԱՌԱՅ

Լեր ընդ ծառայս քաղցրախօս եւ ծանրակաց հանապազ ,
Մի երբեք խիստ եւ դաժան, եւ մի 'նդ նոսա գծաղու գաս ,
Ներեա նոցին թերութեանց բազում անգամ կամակար ,
Զի եւ սաստել կարասցես ի դէպ ժամու տիրաբար :

Մի թոյլ տացես ծառային զի հանդերձիւք աղտեղի
Ելանիցէ ընդ առաջ քեզ կամ առ քեւ նըստիցի .
Ի զըրոյցըս քոց բարձակցաց մի խառնեսցի բնաւ ծառայն ,
Մի ակնարկլի առնիցէ , մի բիրտ տացէ պատասխան :

Զիղջ լիցի քեզ' ի ծառայս թէ վստահիս կուրօրէն ,
Բայց եւ կասկած ընդ նոսա ցանգ ցուցանել չէ օրէն :

## ԾԱԽՔ ԵՒ ՊԱՐՏՔ

Որ ինչ քեզ ոչ է պիտոյ , մի տղայաբար գընեսցես .
Եւ թէ գնեցեր' անդանդաղ ըզսակ գընոյն հատուսցես :
Ինքնին հատո զքո պարտիս , բայց լեր ըզգոյշ ի պարտուց ,
Կալ հաշուեգրով անվըրէպ զել եւ ըզմուտըս ծախուց :

## ՀԱՆԴԵՐՁ ԵՒ ՄԱՔՐՈՒԹԻՒՆ

Հանդերձք լիցեն քո մաքուր' թէ եւ կայցես ի քում տան .
Գիշերազգեստ տարազու մի զար երբեք յերեւան :
Ցայց թէ ումեք ելանես, զգեցիր հանդերձ մաքրագոյն .
Մի բնաւ կարի պըճնազարդ , մի զըրգլեկօք կարկատուն :

Այր հասակեայ չըպարտի զգենուլ պայծառս նորաձեւս ,
Բայց եւ ըզգօն պատանին խորշի զգենուլ յոյժ թեթեւս:

## ԱՆՈՒՆ ԵՒ ՎԱՐՔ ԲԱՐԻՔ

Գանձ պատուական է մարդոյ անուն ամբիծ եւ բարի ,
Զոր թէ կամիս ըստանալ' լըցո զպարտիսդ անթերի .

Մի բանսարկու , մի փառքուս , մի եղիցիս կրօնաւոր ,
Մի սրտասաց եւ շողմող , այլ միշտ արդար , սրբասէր ։

## ԳԻՆ ԵՒ ՎԱՃԱՌ

Կրրպակաւոր թէ իցես ՚ նախ զեկաւորն ողջունեա ,
Նրստել յաթոռ հրաւիրեալ եւ հարց թէ զինչ խնդրէ նա .
Թէպէտ եւ ժիտ այրն իցէ , թէպէտ եւ յոյժ դրժպրհի ,
Որ համբերէն այնպիսում՚ զարծաթ եւ զկեանըս շահի ։

Բայց գընողին ծանրագոյն պարտք են լինել մարդավար ,
Ոչ անարգել ըզվաճառս , չըտալ հրամանս տիրաբար .
Սակ արկանել ողոքով . եւ թէ բուեսցի թանկագին ,
Զիղջ յայտ առնել զի չառնուս , եւ մեկնել յետ ողջունին ։

## ԱԽՏԱՑԵԱԼ ԵՒ ԲԺԻՇԿ

Հիւանդ իցես , մի տրրտունջ եւ զանգատանս առնես զուր .
Այլ առ հարցմունս բրժրշկին տուր պատասխան կարեւոր ։
Ներումն հայցեալ եւ պատմեա թէ նախընթաց դէպք կայցեն ,
Մի մոռացիս շնորհ ունել նորա փութոյն որ ըզքէն ։

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՒ ՃԱՐՏԱՐ

Մատենագիր թէ իցես կամ նրկարիչ ուք քաջուս ,
Մի զքո վաստակըդ գովեր , մի զյաջողուած կամ ըզյոյս .
Բայց մրտերիմ ծանօթից եւ որոց կիրթ է ճաշակ
Մարթիս ճառել զարուեստէդ եւ չըլինել նըշաւակ ։

Ուսումնասէր պատանւոյ վըտանգ է յոյժ մօտալուտ
Ըզնողկային ժառանգել զիմաստակի անուն ցուրտ .
Ըզգոյշ կաց մի պարծեսցիս գիտել զոր ոչըն գիտես ,
Մի ստուգեսցի եւ ըզքեն եթէ աղքատ հըպարտ ես ։

Բայց մի եւ այր անհըմուտ այպն ըզգիտնովք առնիցէ .
Ծաղրել զոր ոչըն գիտես՚ միայն օրէն խրժիցն է ։
Թէ բանք իցեն քո ընդ առն որ զրոց իցէ յօրինող ,
Զայն դու յիշեա ; եւ խնլօք արա զգրոյն սուղ ինչ ներբող ։

Մատենագիր գիւր ինչ երկ եթէ ի նուէր քեզ յղեաց ,
Ցայց եւ առ նա փութապէս , կամ բուղք գըրեա դըրուատեաց :

Եթէ զնըկար տեսանես ճարտարարուեստ նըկարչի ,
Կամ ունկընդիր նըւագաց նըւագածուին կաս քաջի ,
Զըննեա եւ լուր մըտադիւր , հարցումն արա շնորհալից ,
Զճանճար գովեա ճարտարին եւ լեր նըմա խընդակից :

Եթէ գըրուած համառօտ ընծայեցեր դու ի լոյս,
Մէն մի յըղեա օրինակ առ բարեկամս եւ ծանօթս ,
Ի ճակատուն կամ ի կող զանուն դըրոշմեալ առողին
Եւ ի ներքոյ զքո անուն գըրեա ձեռամբըդ քոյին :

## ՔԱՀԱՆԱՅՔ

Ընդ քահանայս չէ օրէն խաղս յաճախել եւ կատակ ,
Այլ մեծարել ըզնոսին իբր Աստուծոյ նըւիրակ :

Բայց եւ նոցա չէ արժան խոտել զանձանց ըզպատիւ ,
Այլ ցանգ զըւարթ եւ լուրջ կալ, շարժմամբ խօսիւք միշտ ազնիւ:

## ԳՆԱՑՔ Ի ՃԱՆԱՊԱՐՀԻ

Թէ ոք ծանօթ կամ աւագ եւ քեզ յուղւոջ ընդ առաջ ,
Զորմոյն ըզկողմըն նըմա տուր եւ կացջիր դու ընդ աջ :

Եթէ խափան ինչ կայցէ յանցըս տեղւոյն յոր հասեր ,
Սպասեա մինչեւ այլք անցցեն , եւ դու մի բնաւ զոք մըղեր :

Մինչ ի տըղմուտ ընթանաս , մի ցայտեսցի ցեխ ըզքեւ ,
Հանդարտաքայլ գընասջիր , լեր յոտընփոխըս թեթեւ :

Մի ընդ ումեք հարկանիս ի մարդաշատ ինչ փողոց,
Եւ մի յախուռն արշաւեր ’ զի մի բաղխիս դուն յայլոց .
Եթէ չիցես մըտադիր այսմ անհրաժեշտ խըրատու ,
Ոչ բիրտ միայն վըկայիս , այլ եւ պատճառք վընասու :

Զգուշեաւ քայլել չէ դիւրին մինչ ունիցիս հովանեակ .
Ըստ դէպս ի վեր զայն ձըգեա կամ ունիջիր վայրահակ .
Թէ ոք առ քեւ պատահեալ ’ անհովանեակ հետեւի ,
Եւ ընդ քոյովըդ խնդրէ պատըսպարան յանձրեւի ,
Ընկալ ըզնա քաղցրութեամբ , հարց եթէ ու՞ր գընայցես ,

Եւ մինչեւ հուպ ի տեղին լեր ուղեկից թէ կարես ։

Եթէ չգիտես դու զուղին որ տանիցի յայն ինչ վայր ,
Ողջոյն ումեք տուր եւ հարց , եւ շնորհ կալցիր կամակար ։

Մի ունկընդիր լինիցիս երբեք այլոց թէ խօսին ,
Եւ մի ուրուք ի հետոց գնայցես իբրեւ անմեկին ։

Ձէ պարտ ի դէմս անցորդաց պըշնուլ յառել զռեհկաբար ,
Եւս առաւել թէ տիկին ոք գայ ՚նդ քոյին ճանապարհ ։

Ողջոյն պատուոյ տուր եւ անց քում ծանօթին երէ գայ .
Թէ սերտագոյն քեզ իցէ , մատիր եւ հարց զիմըդ կայ .
Մեծըն տիօք կամ բարձիւ նախ մեկնեսցի գնալ յուղին ,
Բայց կըրտսերոյն է օրէն կանխել յողջոյն հրաժեշտին ։

Հակիրճ լիցի որ յուղւոջ ընդ բարեկամըս զըրոյց ,
Կըրտսեր կացցէ յորմըն կոյս , թիկնադարձ միւսն ի փողոց ։

Բան կարեւոր թէ ունիս ասել քոյում ծանօթին ,
Հայցեա հրաման ի նմանէ , երբ խուն ինչ վայր ընդ նըմին .
Երէ իցէ առ նովաւ այլ ոք այր քեզ անծանօթ ,
Մի յամեսցես ի խօսել , անց ողջունիւ համառօտ .
Մինչ ընդ ումեք զընայցես , եւ նա ողջոյն այլում ետ ,
Պարտիս եւ դու տալ ողջոյն թէ եւ իցես առնն անգէտ ։

Ի պատուհանս ինչ յանկարծ երէ ծանօթ զոք տեսեր ,
Եւ զի եւ նա զքեզ ետես՝ զայն ճըշմարտիւ գիտացեր ,
Ողջոյն եւեթ պարտիս տալ եւ գնալ յըռիկ ընդ ուղի .
Իսկ բարբառել երբեք ոչ, եւ ոչ առնել ակնարկի ։

## ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՔ

Ցայց առ իրեարս յաճախել հարկ եւ սփոփումն է մարդկան ,
Երէ ի տօնս իցէ դէպ եւ թէ յօրէն հանրական ։

Ի գլուխ տարւոյ նախ ծընողք, աւագք ապա յարգեսցին ,
Կարգ ըստ կարգէ բարեկամք , եւ բարերարք յետ նոցին ։

Միով աւուրբ կամ երկու կանխել քան զօր կաղանդի
Գործ է մարդոյ որ պատիւ յոյժ տալ ումեք կամիցի .
Ի նմին աւուր յայց գընալ եւ մեծարանք են եւ սէր .

Բայց յօվ երբայ եւ կամիս՝ մի քան զեօբնեակն յապաղեր ։

Յայցելութեան զգեստ մաքուր եւ նոր զգեցիր ըստ կարի․
Մի շատ կացցես ուր եւ զնաս, մի քան զքառորդ աւելի ։

Թէ այլ ոք գայ ի վերայ՝ հրաժեշտ տացիր վաղագոյն,
Զի մի տաղտուկ եղիցես եւ տանուտեառն եւ հիւրոյն ։

Այց ազգակիցք ի միմեանց ոչ պահանջեն փոխադարձ,
Սակայն չէ պարտ մինչ ի սպառ ընդպատշաճիւքն առնել զանց ։

Այցելութեանց յՆւրոպէ այս ընդհանուր է օրէն․
Ոչ անազան այցելուին եկանել յայց փոխարէն․
Միայն ի դէպ է ղխտել թէ նրբ առ քեզ միւսըն գայ,
Զի զայն առցես ի կանոն այցելութեան քում առ նա ։

Թէ տկար իցես եւ կամ խօթ, յայց եկանել ոչ է հարկ․
Եւ մի զնայցես տարաժամ, զիտեա զմիւսոյն ժամանակ ։
Ի կայս ի կոյս Եւրոպայ զանազանեալ է կանոն,
Բայց միջօրէն միշտ ի դէպ, ոչ այգն եւ ոչ երեկոն ։

Երէ ծառայն ասիցէ թէ չէ ի տան տանուտէր,
Դու թէ տեսեր իսկ ըզնա՝ մի զհակառակըն պնդեր․
Այլ թող անդէն ըզբըղբեակն յորում դրոշմի քոյդ անուն
Ծալեալ ըզմին ի ծայրից ի նշան անձամբ երթալոյն ։

Թէ չիք ի տանն բնպասեակ որ ազդ ըզքէն առնիցէ,
Մի համարձակ մըտաներ, բախեա զի ոք ձայն տացէ ։

Մի կանխեսցես դու բազմել՝ ի բազմական հրաւիրեալ․
Փութա զարոտ դուռն առնուլ՝ չեւ տանուտեառնըն բերեալ․
Բան զտանուտէր միշտ ի վայր եւ մի ի վեր նըստիցես ։
Մի կուռն յաթոռըն թաղեր, եւ մի նովիմբ երերիս ։

Թէ տանուտէրն եկանել կամի եւ զայն դու զգացեր,
Թէ եւ նա կալ բռնիսլէ՝ մի եւս այլ շատ յապաղեր․
Երէ բանից թել հատանէ, եւ նա ինչ նոր յաւել ոչ,
Դարձեալ քեզ ոչ է օրէն շատ յամել յայնըմ տեղւոջ ։

Այլք անծանօթք քեզ ի տան անդ թէ կայցեն եւ խօսին,
Տուր տանուտեառն ողջոյն սուղ եւ նիստ համդարտ եւ լռին․
Զբանիւք նոքա թող անկցին․ յետ սակաւուց թէ կամիս
Ողջոյն բնաւիցըն տըւեալ կամ լռութեամբ մեկնեսցիս ։

Առ տանուտեարըն մինչ կաս, թէ բուղբ առ նա հասանէ,
Բայց նա անբաց զայն թողու կամ զառաջեաւըն դրնէ,
Խընդրեա բանալ ընթեռնուլ ’զի մի լիցիս դու խափան.
Եւ թէ չեբաց’ զխտաջիր զի զնալ ի բաց է արժան:

Թէ յընտանեաց ոք եմուտ յայցելութեան քո պահուն,
Դու մի մեկնիր առ ժամայն, այլ յոտըն կաց’ տուր զողջոյն:

Այնպէս ընկալ զայցելուս քո պատուասէր հըրճուանօք,
Զի զոհութեամբ երթիցեն’ անդրէն դարձի տենչանօք.
Ի մուտն եւ յելըս նոցին յոտըն կացջիր մըտադիւր,
Թէ ոչ սանդղոց մինչ ի գլուխ, գէթ մինչ ի դուռն երթիջիր:

ՇԱՐԺՈՒԱԾՔ

Պըշնուլ ի դէմս զոեհկօրէն, ըզգլուխ ընդ վայր տատանել,
Կալ յերերի անդադար, խիղբ ըզծընգօք արկանել,
Ազդըր զազդերբ հեծուցիկ’ զոտըս պարզել ի խարոյկ,
Ի հայելւոջ հըտպըտել, զհերս յարդարել եւ ըզմոյկ,
Բուռն հարկանել զումեքէ, բառնալ քըրքիջ բարձրաձայն,
Զաչս անհեթեթ դարձուածովք ձըգտել յերկինս յարաժամ,
Խաղալ մատամբք ընդ զարդու, զայլոյ խեթկել ոտն ոտամբ,
Զծայրս ընչացից ոլորել յար վայրայածըն մատամբ,
Ցանծանօթին ի տըփոյ խլել մըխոցաւ ընչաղեղ
Կամ թէ նըմին կարկառել ըզկարծեցեալըն զայն դեղ,
Այս ամենայն արարուածք եւ այսպիսիք անհամար
Այլոց տաղտուկ արկանեն եւ զքեզ առնեն արհամարհ:

Դու թէ չկամիս ծաղըր կալ եւ ոչ այլոց տալ ձանձրոյթ,
Քըննեա զանձին թերութիւնս եւ արկ ի բաց վաղ ընդ փոյթ:

Ցորժամ խօսիս’ ըզլեզուդ մի առ շըրթամբք ունիցիս,
Զի մի բըզզալ կամ ծաղրել եւ կամ թոթով բըփիցիս:

Երէ յանկարծ լորձն եւ թուք ի բերանոյդ կաթեսցի,
Զիմանալոյն առնիջիր, բայց տես մի այլ դիպեսցի:

Զախողակի կակազոտ երէ իցես կամ թըլուատ,
Զամենայն ճիգն արկ ի վար առնել զլեզուդ քո ազատ.
Գիրս ընթերցիր բարձրաձայն, եւ բառս հընչեա դըժուարին,
Որպէս արար Դեմոսթեն, որպէս յոլովք արարին:

Թէ մաքրութեան ես սիրող եւ քաջառողջ խսկ կենաց ,
Խընամ կալջիր հանապազ մաքրութեան քոց ատամանց .
Բազում անգամ պերճախօս եւ շնորհալից ասացուած
Առ ատամանցըն նեխոյ մարթի խոտիլ յունկընդրաց :

Սակայն թէպէտ եւ մաքուր շարս ատամանց ունիցիս ,
Մի շատ բացցես ըզբերան մինչ ընդ ումեք խօսիցիս :

Մատն ի ըլնտերըս մըխել ՚ ծաղիկ տանել ի բերան ,
Սովորութիւնք են ներեալք թերեւս գռեհկացըն միայն :

Կամիս լինել բարեկիրթ , ունել ընտիր ախորժակ ,
Մի ի խօսելն յաճախեր ձեւս եւ շարժմունս այլանդակ .
Զէ վայելուչ ի պարզ բան խորհրդաւոր առնել ձեւս ,
Եւ ոչ ի ծանըր զըրոյց շարժմունս արագ եւ թեթեւս :

Գովեմ ես զայն պերճախօս որ շարժուածովք ճահաւոր
Կենդանութիւն տայ բանին եւ կերպարան կարեւոր :

Մարթիս ըզձախըղ բազուկ ունել անշարժ ի կայի ,
Զաջ ըստ տեղւոյն տատանել յօժ վայելուչ վըկայի .
Իսկ զոր ունիս ոչ սակաւք այն է դըժխեմ սովորոյթ ,
Ձեռն ի զըրպանս կամ ի ծոց կամ մած ի յանջ կալ անփոյթ :

Որ կայն անշարժ եւ խօսի , թըւի խօսուն մեքենայ ,
Եւ որ շարժին անհեթեթ ՚ կարծի հարեալ դեւ ի նա :
Բայց դու եւ այսըմ միտ դիր . թէ ոք առնէ զայդպիսիս՛
Անտես արա մըտադիւր , թէ ոչ՛ եւ դու այպանիս :

## ԶՐՈՅՑՔ ԵՒ ՈՒՆԿՆԴՐՈՒԹԻՒՆ

Ոչ անդադմըրըն զըրոյց է կենցաղել ընդ մարդկան ,
Այլ գործ է կալ ունկընդիր , ի դէպ խօսել միշտ զարժան :

Թէ ոք առ քեզ ինչ ասէ , հայեաց ի դէմսըն զըւարթ ,
Եւ ի խօսելն ընդ ումեք՛ այլ ինչ գործել ոչ է պարտ :

Եթէ զխօսողըն վարանք կամ մոռացօնք ունիցին ,
Ցանգէտըս լեր կամ ցածուն բանիւ օգնեա ծանօթին .
Թէլ զըրուցաց ընկերին եթէ յանկարծ հատանի ,
Ի դադարել պատճառին քեզ յուշ առնել անկանի ,

Բայց ողոքով ՚ զի յառաջ ըզբանն հատեալ վարեսցէ.
Իսկ հատանել զայլոց խօսս երբէք ումեք անկ ոչ է:

Միանգամայն թէ խօսիք ի ջերմաջերմըն զըրոյց ,
Հարկ է լըռել փութապէս միումն ի ձենջ յերկոցունց,
Ներումն հայցել ի միւսմէն եւ խօսելոյ տալ հրաւէր
Մինչեւ ըսկիզբն արասցէ այն որ կարգաւն է ի վեր:

Թէ պատմութիւն ոք պատմեալ եւ զուարճալի զայն կարծէ,
Կամ զօրովի յիւրն ի բանս եւ ըզքո սիրտ ոչ շարժէ,
Թէպէտ եւ յոյժ ձանձրասցիս ՚ ցոյց խուն ի դէմսըդ ժըպիտ ,
Զի մի լըքցի սըրտաբեկ քոյդ վիպասան պարզամիտ:

Թէ բանս ի բանս աղխաղխեալ զնաց յոյժ հեռի յիմաստէն ,
Համբեր ժուժեա լըռութեամբ մինչեւ դարձցի նա անդրէն.
Երբ անծայր անաւարտ այն պատմութիւն երեւի,
Եւ վիպասանն է առազ ոք կամ տիօք ծերունի ,
Դարձեալ ժուժեա մըտադիւր. իսկ թէ լցէ դիւրընտել ,
Կարես ճարտար դարձուածով զնախկինըն բան յուշ առնել:

Գործ է փափուկ դըժպըհի զբանից հայցել կըրկնութիւն.
Բայց թէ լցեն եւ բազումք որ չիմացան քեզ հանգոյն ,
Եւ հարկ իցէ խօսողին կըշռել ի դէպ պատասխան ,
Նախ ըզներումըն խնդրեալ եւ ապա հարց ըզնոյն բան:
Եթէ ոք սուտ ինչ եւ կեղծ վիպասանել ախորժէ,
Գիտեմ զի զգօն ունկընդրին ոչ սակաւ վիշտըս բերէ.
Թէ հաւատաս՚ այպանիս իբր այր տըխմար եւ ապուշ ,
Եւ թէ հերքես ՚ տըմարդի կոչիս կամ խրոխտ անըզգոյշ.
Ցայսգոյն ի դէպս անկորուստ պահես զանձին ըզպատիւ
Թէ ցուրտ դիմօք ի լուր կաս եւ ցըրտագոյնըս սըրտիւ:

Մինչ ջերմաջերմըն պատմէ ոք իբր անլուր ինչ եւ նոր
Որում իցես դու տեղեակ զէթ ըստ մասին կարեւոր ,
Մի առներ յայտ թէ գիտես , զի մի կըեսցէ նա զամօթ ,
Թէ եւ բանիւք անալի խանգարիցէ զհամն եւ զհոտ:

Մի շուքափեր ի խօսելդ եւ մի լինիր ծանր եւ ձիգ.
Զըրստակ հընչումըն սիրեա եւ զառոգանս գեղեցիկ:

Վա՜շ իմ քաջին որ հըմուտ է բարբառոյն հայրենի ,
Եւ որ ի հայ ճոխ լեզու բան չըխառնէ վայրենի:

Ըստէպ ոգեա ի զըրոյց ըզխօսակցին պատուանուն

Տէր ասելով կամ տիկին, կամ վարդապետ կամ պարոն ։

Պատասխանի թէ հարցմանց ունիս կըշռել օտարին,
Մի շատ գըրեր ասել յոկ այո կամ ոչ ցըրտագին ։

Գործ թէ պատմես յորում չեաւ իցեն եւ այլք քեզ կըցորդ,
Նախ զայլոց դէմս ած ի յուշ, յետոյ ի մէջ բեր ըզքոյդ ։

Թէ ընդհարար ընդ ումեք, ներումն հայցեա դու խկոյն.
Ասել թէ չիք ինչ վընաս՝ այն վայելուչ է միւսոյն ։

Թէ ախորժես դու ի քնէ պատմող լինել դիպուածոց,
Տես թէ կայցէ յունկընդիրսդ եւս ախորժից տարացոյց ։

Որ ցանզ գիր բանըս սըրնդէ՝ ընդ այնպիսում մի կազեր,
Խոտեա մըտօք զիմաստակ, ըզծաղրածուն մի յարգեր.
Գովեա զբարին, այլ չափով. մի յոյժ զըրգոփս ընդ չարի.
Ընդդէմ ազգի կամ տեղւոյ կըքրել է գործ յիմարի ։

## ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Նամակ սիրուն է հակիրճն եւ քաղցր ոճով դիւրիմաց,
Ի թուղթ ազնիւ սուրբ յաղտոյ, ոչ ունելով ըզքերած ։
Անպատասխան ընդ երկար ծանր է թողուլ ըզքարտէս.
Մի գրեր առանց փըրկանաց՝ յորժամ շընորհ ինչ խընդրես ։

Ի պատրուակ ամփոփել ըզթուղթ նըշան է պատւոյ,
Քան նըշխարաւ զայն փակել՝ լաւ է վաքել մոմ կընքոյ ։

## ՎԱՅԵԼՉՈՒԹԻՒՆ

Մի խոստանար ձոխապէս. զոր խոստանաս՝ կատարեա.
Ընծայս սիրով ընկալջիր, այլ ըզխըրատ մեծարեա ։

Երթէ երկու կամ երեք ոմանք հըծծեն մեկուսի,
Չէ պարտ մօտել առ նոսա եւ ականջել զինչ ասի.

Գործ է ստահակ պատանեաց եւ անըզգոյշ ոըերոյ
Ըզկահս յուզել այլոյ տան եւ ըզգըրեան սեղանոյ,
Ձնամականին վերծանել, կալ ի զընին գըրարանի,
Եւ մանաւանդ ըզնամակ բանալ առանց հրամանի ։

## ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ

Ի ճանապարհ չեւ անկեալ՝ յայց եկ քոյոց ծանօթից ,
Եւ յուղւոջ տես մի ումեք զոլ անձրնդիր ուղեկից .
Մի զպատուհանըս կառաց բանար փակեր ըստ հաճոյս .
Ընդելացիր ուղեկցաց , բայց քում գաղտնեաց լեր ըզգոյշ :

## ԽՐԱԽՃԱՆ

Հաճոյք միմեանց եղիցին զորս ի խրախուճս հրաւիրես .
Գէթ երկաւուրբք ինչ յառաջ ազդ առ նոսին արասցես :
Գեղայարմարք եղիցին ըզսեղանով բազմականք,
Եւ յորդեսցեն ի նոսա սէր եւ պատիւ մեծարանք :

Մի ծառայիցըն սաստեր , մի դըսրովեր զկերակուր .
Մի բուռն առներ ուտել շատ , մի յար զբաժակըս լընուր .
Ի սեղանի լեր մաքուր , ծանր եւ զըւարթ աչալուրջ ,
Կալ քեզ կանոն զոր ունին աւազք որ կան գ.քեւ շուրջ :

## ԽԱՂ

Ուսիր յաղթել ի խաղի եւ կալ մընալ անտըրտում ,
Եւ մի կարի հըրճուեսցիս ի վաղանցիկ բաղդին քում :
Նենգ եւ խաբկանք ի բացէ , զըւարճ իցեն ըզբօսանք .
Քանզի կըռուով եւ կազիւ ոչ խաղ նիւթի՝ այլ տանջանք :

## ԱՅՑ ԱՌ ՀԻՒԱՆԴՍ ԵՒ ՑՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Այցդ առ հիւանդն իցէ սուղ եւ սըրտառուչ խընամով .
Քաջալերեա ժուժկալել՝ զդեղն եւ զբըժիշկ գովելով :
Փուքա թաղման ի հանդէս բարեկամաց ծանօթից ,
Եւ թէ իցես բացական՝ գըրեա նամակ կարեկից :

ԳԱԲՐԻԷԼ Վ. ԱՅՎԱԶՈՎՍԿԻ

1532

2013

2025707

ՀՀ Ազգային գրադարան
NL0025707